

ԿԱՆԹԵՂ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

GANTEGH

BULLETIN DU DIMANCHE
DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE
ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



GANTEGH

SUNDAY BULLETIN OF
ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

WWW.SAINTGREGORY.CA

ԿԻՐԱԿԻ, 21 ՅՈՒՆԻՍԿԱՐ 2018

Պահքի նշման կարգը

Բ ԿԻՐԱԿԻ ԶԿՆԻ ԾՆՆԴԵԱՆ/ԹԻԻ 42
SUNDAY, January 21, 2018

2nd SUNDAY AFTER NATIVITY/ NO. 42
TODAY'S BIBLE READINGS

Timothy 4:12-5:10 / John
3:13-21 / Պատարագիչ՝



ԱՐԺ. Տ. ԵՂԻԱ Ա. ՔՀՆՅ. ՔԵՐՎԱՆՃԵԱՆ

Հոգևոր Հովիվ

Celebrant:

REV. ARCH. FR. YEGHIA KERVANJYAN

Pastor

Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan, Dn. Vahan Shakaryan, Dn. Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan

Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjian

Choirmaster: Miss Lori Antounian


Organist: Mr. Karen Manucharyan

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

secretary@saintgregory.ca | www.saintgregory.ca

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ՏԻՄՈԹԵՈՍ 4-12-5:10

12Ո՛չ մէկը թող արհամարհէ քու երիտասարդութիւնդ, հապա տիպա՛ր եղիր հաւատացեալներուն՝ խօսքով, վարքով, սիրով, հաւատքով ու մաքրակեցութեամբ: **13**Մինչեւ որ գամ՝ ուշադի՛ր եղիր կարդալու, յորդորելու, սորվեցնելու: **14**Անհոգ մի՛ ըլլար քու մէջդ եղած շնորհին հանդէպ, որ մարգարեութեամբ տրուեցաւ քեզի՝ երեցներուն ձեռնադրութեամբ: **15**Խոկա՛ այդ բաներուն մասին եւ զբաղէ՛ ատուցմով, որպէսզի քու յառաջդիմութիւնդ երեւնայ ամենուն: **16**Ուշադի՛ր եղիր դուն քեզի ու վարդապետութեան, եւ մի՛շտ յարատեւէ ատուց մէջ. քանի որ այդպէս ընելով՝ պիտի փրկես թէ՛ քեզ, թէ՛ քեզ լսողները:

1Մի՛ սաստեր տարեցը, հապա յորդորէ՛ զայն՝ հօր մը պէս. երիտասարդները՝ եղբայրներու պէս, **2**տարեց կիները՝ մայրերու պէս, դեռահասակները՝ քոյրերու պէս, բոլորովին մաքրակեցութեամբ:

3Պատուէ՛ այն այրիները՝ որ ի՛րապէս այրի են: **4**Բայց եթէ այրի մը ունի զաւակներ կամ թոռներ, անոնք թող սորվին նախ իրենց տան մէջ բարեպաշտութիւն ցոյց տալ, ու փոխարէնը հատուցանել իրենց ծնողներուն. որովհետեւ այ՛դ է բարին եւ ընդունելին Աստուծոյ առջեւ:

5Իսկ ան որ ի՛րապէս այրի է ու մինակ մնացած, կը յուսայ Աստուծոյ, եւ գիշեր-ցերեկ կը յարատեւէ աղերսանքի ու աղօթքի մէջ. **6**մինչդեռ փափկասէր այրին մեռած է, թէպէտ կ'ապրի: **7**Պատուիրէ՛ այս բաները, որպէսզի անարատ ըլլան: **8**Բայց եթէ մէկը չի հոգար իրենները ու մա՛նաւանդ իր ընտանիքը, ան ուրացած է հաւատքը, եւ աւելի գէշ է՝ քան անհաւատ մը:

9Իբր այրի թող դասուի ա՛ն՝ որ վաթսուն տարեկանէն կրտսեր չէ, մէկ մարդու կին եղած է, **10**ու բարի գործերով վկայուած. եթէ զաւակներ մեծցուցած է, հիւրեր ընդունած, սուրբերուն ոտքերը լուացած, տառապեալներուն նպաստած, ամէն բարի գործի հետամուտ եղած:

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՅԱՆՆԵՍԻ 3.13-21

13Ո՛չ մէկը երկինք բարձրացաւ, բացի անկէ՝ որ երկինքէն իջաւ, մարդու Որդին՝ որ երկինքն է: **14**Եւ ինչպէս Մովսէս բարձրացուց օձը անապատին մէջ, այնպէս պէտք է որ բարձրանայ մարդու Որդին. **15**որպէսզի ո՛վ որ հաւատայ անոր՝ չկորսուի, հապա ունենայ յաւիտենական կեանքը:

16Որովհետեւ Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ անգամ տուաւ իր միածին Որդին, որպէսզի ո՛վ որ հաւատայ անոր՝ չկորսուի, հապա ունենայ յաւիտենական կեանքը: **17**Քանի որ Աստուած աշխարհ զրկեց իր Որդին՝ ո՛չ թէ աշխարհը դատապարտելու, հապա՝ որպէսզի աշխարհը փրկուի անով: **18**Ան որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր, իսկ ան որ չի հաւատար՝ անիկա արդէն դատապարտուած է, որովհետեւ չհաւատաց Աստուծոյ միածին Որդիին անունին: **19**Սա՛ է դատապարտութիւնը, որ լոյսը աշխարհ եկաւ, բայց մարդիկ սիրեցին խաւարը՝ փոխանակ լոյսին, քանի որ իրենց գործերը չար էին: **20**Որովհետեւ ո՛վ որ չարիք կը գործէ, անիկա կ'ատէ լոյսը եւ չի գար լոյսին քով, որպէսզի չկշտամբուին իր գործերը: **21**Բայց ան որ կը կիրարկէ ճշմարտութիւնը՝ կու գայ լոյսին քով, որպէսզի իր գործերը յայտնաբերուին թէ գործուեցան Աստուծմով»:

Timothy 4:12-5:10

12 Let no man despise thy youth; but be thou an example of the believers, in word, in conversation, in charity, in spirit, in faith, in purity. **13** Till I come, give attendance to reading, to exhortation, to doctrine. **14** Neglect not the gift that is in thee, which was given thee by prophecy, with the laying on of the hands of the presbytery. **15** Meditate upon these things; give thyself wholly to them; that thy profiting may appear to all. **16** Take heed unto thyself, and unto the doctrine; continue in them: for in doing this thou shalt both save thyself, and them that hear thee.


5.1 Rebuke not an elder, but intreat him as a father; and the younger men as brethren;

2 The elder women as mothers; the younger as sisters, with all purity. **3** Honour widows that are widows indeed. **4** But if any widow have children or nephews, let them learn first to shew piety at home, and to requite their parents: for that is good and acceptable before God. **5** Now she that is a widow indeed, and desolate, trusteth in God, and continueth in supplications and prayers night and day. **6** But she that liveth in pleasure is dead while she liveth. **7** And these things give in charge, that they may be blameless. **8** But if any provide not for his own, and specially for those of his own house, he hath denied the faith, and is worse than an infidel. **9** Let not a widow be taken into the number under threescore years old, having been the wife

of one man. ¹⁰ Well reported of for good works; if she have brought up children, if she have lodged strangers, if she have washed the saints' feet, if she have relieved the afflicted, if she have diligently followed every good work.

John 3.13-21

¹³ And no man hath ascended up to heaven, but he that came down from heaven, even the Son of man which is in heaven. ¹⁴ And as Moses lifted up the serpent in the wilderness, even so must the Son of man be lifted up: ¹⁵ That whosoever believeth in him should not perish, but have eternal life. ¹⁶ For God so loved the world, that he gave his only begotten Son, that whosoever believeth in him should not perish, but have everlasting life. ¹⁷ For God sent not his Son into the world to condemn the world; but that the world through him might be saved. ¹⁸ He that believeth on him is not condemned: but he that believeth not is condemned already, because he hath not believed in the name of the only begotten Son of God. ¹⁹ And this is the condemnation, that light is come into the world, and men loved darkness rather than light, because their deeds were evil. ²⁰ For everyone that doeth evil hateth the light, neither cometh to the light, lest his deeds should be reprov'd. ²¹ But he that doeth truth cometh to the light, that his deeds may be made manifest, that they are wrought in God.



ՏՕՆԵՐ

21 Յունուար 2018 Բարեկենդան Առաջաւորաց Պահոց



Յատուկ է միայն Հայ Եկեղեցոյ: Կը սկսի Մեծ Պահքէն 3 շաբաթ առաջ: Կը պահանջուի խիստ պահեցողութիւն: Հին ժամանակ, այդ օրերուն թուլատրուած էր միայն աղ ու հաց ուտել, արգիլուած էր Ս. Պատարագ մատուցել: Առաջաւորաց Պահքի խորհուրդը հեթանոսական ապականութենէն մարդկային 5 զգայարաններու սրբումն է: Հին ատեն սովորոյթ կար մկրտութենէն առաջ 5 օր ծոմ պահել: Ս. Գրիգոր Լուսաւորիչը նոյնպէս կը հրամայէ Տրդատ թագաւորին եւ միւսներուն մկրտութենէն առաջ 5 օր ծոմ պահել, որուն շնորհիւ ալ Տրդատը եւ ուրիշներ կը փրկուին այսահարութենէն: Այդ պատճառով ալ Առաջաւորաց Պահքը կը կոչուի նաեւ՝ փրկութեան պահք: Համաձայն Հայ Եկեղեցոյ վարդապետներուն, Առաջաւորաց Պահքը հաստատած է Ս. Գրիգոր Լուսաւորիչը, ի յիշատակ վերոյիշեալ ծոմապահութեան: Այս պահքի Առաջաւորաց կոչուելուն մասին կայ երկու մեկնութիւններ. Ա. իբրեւ կարապետ Մեծ Պահքի, Բ. իբրեւ Հայոց առաջին պահքը: Առաջաւորաց Պահքը թւրիմացաբար անուանուաղ է նաեւ՝ Ս. Սարգիսի պահք, քանի որ Առաջաւորաց Պահքին յաջորդող շաբաթ օրը Հայ Եկեղեցին կը տօնէ Ս. Սարգիսի տօնը: Միջնադարին Յոյներն ու վրացիները մեղադրած են Հայ Եկեղեցոյ Առաջաւորաց Պահքը Ս. Սարգիսի անուան հետ կապուելուն համար, որ կը վերագրեն որպէս կախարդութիւններ: Հայ մատենագիրներու վկայութեան համաձայն, Առաջաւորաց Պահքը հին ժամանակ գոյութիւն ունեցած է նաեւ՝ Յոյներու ու լատիններու մօտ: Առաջաւորաց Պահքի 5-րդ օրը (ուրբաթ) կը յիշատակուի Ս. Յովնանի քարոզութիւնն ու Նինվէի ապաշխարութիւնը ոչ իբրեւ Ս. Յովնան մարգարէի տօն, այլ իբրև մեծ ապաշխարութեան եւ ծոմապահութեան օրինակ:



22 Յունուար 2018

Առաջաւորաց պահք

Այս տարի Փետրուար 6-ին կը սկսի Առաջաւորաց պահքը (այն յատուկ է միայն Հայ Առաքելական եկեղեցիին), որ կը տեւէ հինգ օր՝ այս տարի մինչև Փետրուար 10-ը ներառեալ:

Առաջաւորացը առաջին պահքն է, որ հաստատուած է Ս. Գրիգոր Լուսաւորիչի կողմէ, եւ այդ պատճառով ալ կը կոչուի առաջաւորաց՝ առաջին:

Ինչպէս կ'աւանդուի մեզի պատմութիւնը, Խոր Վիրապէն ելլելէն յետոյ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը՝ Տիրոջ հրաշքով դարձի եկած Տրդատ արքային, հայոց մեծամեծերուն ու ողջ ժողովուրդին, նախքան մկրտելը՝ 65 օր շարունակ, Քրիստոսի հաւատքը կը քարոզէր եւ այդ օրերէն 5-րդ օրը պատուիրեց պահեցողութեամբ եւ ապաշխարութեամբ պատրաստուիլ Մկրտութեան:

Հին ժամանակ պահք ըսելով կը հասկնային մեր այսօրուայ ծոմը, այսինքն՝ ընդհանրապէս չէին ուտեր (ջուրի սակաւ գործածութեամբ) կամ կ'ուտէին միայն սակաւ բանջարեղէն: Բայց հետագային բանջարեղէնին աւելցան բուսական ծագում ունեցող նաեւ՝ այլ կերակուրներն ու մեղրը, և եւ տարբերակին մէջ մտաւ պահքի ու ծոմի միջեւ՝ ծոմը դարձնելով պահքի աւելի խիստ տեսակ: Այսօր Առաջաւորաց պահքը պահելու կերպը՝ ծոմ, թէ սովորական պահք, կը թողուին հաւատացեալի կամքին:

Առաջաւորաց պահքը հիմնականին կը նախորդէ Ս. Սարգիսի տօնին, սակայն տօնին հետ այն որեւէ առնչութիւն չունի:

Պահք պահելէն առաջ անհրաժեշտ է երթալ եկեղեցի, մասնակցիլ երեկոյեան ժամերգութեան եւ աղօթել, որ Աստուած զօրացնէ պահքը ճիշդ աննելու եւ հոգեւոր օգուտներ քաղելու համար: Պէտք է քաջ գիտնալ, որ պահքը մարմնի համար չէ, այլ՝ հոգիի մեղքէն ազատագրուելու:

Պահքի վերջին օրը անհրաժեշտ է երթալ եկեղեցի, մասնակցիլ երեկոյեան ժամերգութեան, իսկ յաջորդ օրը՝ Ս. Սարգիսի տօնին, մասնակցիլ Ս.



Պատարագին եւ հաղորդուիլ, որուն միջոցաւ դուրս գալ նաեւ՝ պահքէն:

Իսկ ինչո՞ւ հինգ օր պահք կը պահենք:

Մեր Եկեղեցւոյ Յայրերը այս մասին մի քանի բացատրութիւն կու տան:

Ա) Ինչպէս արդէն ըսուեցաւ, սուրբ Գրիգոր Լուսաւորչի կարգադրութեամբ ողջ արքունիքը եւ Յայ Ժողովուրդը ապաշխարութեան պահքի մեջ եղան 5 օր:

Բ) Քանի որ մարդը հինգ զգայարան ունի՝ տեսանելիք (աչքերը), լսելիք (ականջները), հոտոտելիք (քիթը), ճաշակելիք (բերանը) եւ շօշափելիք (ձեռքերն ու ոտքերը), որոնց միջոցաւ կը մեղանչէ, ուստի այս պահքի հինգ օրերու ընթացքին պիտի զոջայ ասոնցմով կատարած իր մեղքերուն համար, խոստովանի անոնք Աստուծոյ եւ ջանայ այլեւս չկատարել:



Գ) Ինչպէս յայտնի է, Աստուած աշխարհը եւ անոր մեջ եղած ամէն ինչ ստեղծեց 6 օրերու ընթացքին: Վեցերորդ օրը ստեղծեց մարդը եւ, թէն մինչ այդ արդէն ստեղծեր էր բոլոր տեսակի կենդանիները, տուած անոնց աճելու ու բազմանալու հրաման, սակայն ուտելու հրաման դեռևս չէր տուած: Այդ հրամանը (Տե՛ս՝ Ծննդ. 1: 29-30) մարդուն ու ամբողջ կենդանական աշխարհին տուաւ միայն վեցերորդ օրը, այսինքն՝ 5 օր յետոյ: Ուրեմն աշխարհի ստեղծման առաջին 5 օրը, կարելի է ըսել, պահքի կամ ծոմի օրեր էին, քանի որ ոչ մէկը բան մը չէր ուտեր:

Դ) Ըստ Եկեղեցւոյ՝ հինգօրեայ պահք սահմանած էին նաեւ՝ Մովսէսէն առաջ եղած նահապետները: Աւանդութիւնը կ'ըսէ, թէ դրախտէն արտաքսուելէն յետոյ Ադամը 5 օր քաղցած մնաց: Անորմէ սորվելով՝ անոր որդիներն ալ հինգօրեայ պահք կը պահեն, օրինակ, Աբելը՝ զոհ մատուցելէն առաջ, կամ Սեթը, երբ իր հայր Ադամը մեռաւ: Ենովքն ալ 5 օր պահք կը պահէր ամէն ամսամուտին, իսկ Նոյն այս պահքը պահած է տապան մտնելէն առաջ եւ այնտեղէն ելլելէն յետոյ: Աբրահամը, Յակոբը եւ Յովսէփն ալ հինգօրեայ պահք կը պահեն: Եւ ըստ մեր Եկեղեցւոյ հայրերու բացատրութեան՝ Առաջաւորաց պահքը՝ նաեւ՝ նահապետներէն սահմանուած ըլլալն է

պատճառը, որ այս պահքի առաջին չորս օրերու ընթացքին (Երկուշաբթին մինչեւ Հինգշաբթի) Աստուածաշունչէն հատուածներ՝ ընթերցուածներ, չեն կարդար եկեղեցւոյ մէջ, որովհետեւ այս պահքը հաստատուած է այն ժամանակ, երբ դեռ չէին գրուած ոչ Հին Կտակարանի, ոչ ալ առաւել եւս Նոր Կտակարանի գիրքերը:

Առաջաւորաց պահքի Ուրբաթը Յովնան մարգարէի յիշատակի օրն է

Առաջաւորաց պահքի վերջին՝ Ուրբաթ օրը, Յովնան մարգարէի (ս. ք. 8-րդ դար) յիշատակի օրն է, եւ եկեղեցւոյ մէջ կ'ընթերցուի անոր գիրքը, ուր նոյնպէս կո խօսուի պահքի ու ապաշխարութեան մասին. «Թագաւորին ու Անոր մեծամեծներուն կողմէ Նինուէի մէջ կը յայտարարուի ու կ'ազդարարուի, թէ մարդ եւ անասուն, հօտ եւ արջառ թող բան մը չուտեն, չճարակեն եւ ջուր չխմեն: Եւ մարդ ու անասուն քուրճ հագան, ի սրտէ աղօթեցին Աստուծոյ, բոլորը ետ կեցան իրենց չար ճամբաներէն եւ անօրէնութիւններէն, որ իրենց ձեռքով կը կատարուէր...» (Յովն. 3: 7-8):



Holidays

January 21, 2018

Eve of the Fast of Catechumens

The Fast of Catechumens is peculiar only to the Armenian Church. It begins three weeks before the Great Lent. In ancient times people could eat only bread and salt during the fast of Catechumens. On those days it was not allowed to celebrate Divine Liturgy either.



The meaning of the Fast of Catechumens is the purification of the five human senses from pagan impurity. In the ancient Church there was a custom to fast during five days before baptism. St. Gregory the Illuminator ordered King Tiridates and others to fast for five days before baptism in order to get freed of the evil. That is the reason also for fasting of Catechumens to be called “fast of salvation” from the evil.

According to the tradition, the fasting of Catechumens was initiated by St. Gregory the illuminator in memory of the above-mentioned practice.

There are two explanations regarding the name of this feast.

It is called the fast of Catechumens:

1. As the precursor of the Great Lent, and
2. As the first Armenian fast.

On the fifth day of the fasting of Catechumens, on Friday, the remembrance day of the Prophet Jonah is celebrated, but it is celebrated not as the feast of Prophet Jonah, but as the memory of an example of great repentance and abstinence which Jonah urged. At times, wrongly, the fasting of Catechumens was called the fast of St. Sarkis, because the Armenian Church celebrates the feast of St. Sarkis on Saturday following the fast. In Middle Ages the Byzantine and the Georgian Churches blamed the Armenian Church for the fasting of Catechumens, relating it to St. Sarkis, to whom they ascribed sorcery. According to the testimonies of Armenian medieval writers. Greek and Latin Churches also had the fasting of Catechumens in ancient times.





ԲԱՐԻ ԱՊԱՔԻՆՈՒՄ

Եկեղեցւոյ Հովիւին, Ծխական Խորհուրդին, Տիկնանց
Յանձնախումբին, Դպրաց եւ Սարկաւազաց Դասերուն եւ բոլոր
Յարակից Սարմիններուն կողմէ շուտափոյթ ապաքինում կը
մաղթենք

Եկեղեցւոյ Օժանդակ տիկիներէն՝
Տիկին Թագուհի Օտապաշեանին

Ապաքինման լաւագոյն մաղթանքներով՝
Հովիւ եւ Ծխական Խորհուրդ





Սիրելի հաւատացեալներ,
Անոնք որոնք կը փափաքին, որ
Հոգեւոր հովիւը այցելութիւն
կատարէ իրենց հիւանդ
ընտանեկան պարագաներուն կամ
հարազատներուն, Եկեղեցոյ Հովիւր՝

Արժ. Տ. Եղիա Ա. Քինյ. Քերվանճեան պատրաստէ
անմիջականօրէն իր այցելութեամբ ընդառաջելու
ձեր փափաքին:

Հաճեցէք կապ պահել՝ Տէր Հօր հետ
հեռաձայնելով՝ (514) 241-9347 կամ
Եկեղեցոյ գրասենեակ (514)
279-3066



FAMILY PRAYER

*God made us a family
We need one another
We love one another
We forgive one another
We work together
We play together
We worship together
Together we use God's word
Together we grow in Christ
Together we love all men
Together we serve our God
Together we hope for Heaven
These are our hopes and ideals
Help us to attain them,
O God, Through Jesus Christ
our Lord*

Dear
Parishioners,
If you have
family members or relatives that you wish to
have spiritual support, our Pastor Arch. Fr.
Yeghia Kervanjan is ready to fulfill your wish
and visit them, when and where is needed.

Please feel free to contact Der Yeghia directly
at (514) 241-9347
or call the secretariat of the Church at (514)
279-3066



ՏՆՕՐՀՆԷՔԻ ԱԲԱՆԴՈՅԹՆ ՈՒ ՍՈՎՈՐՈՅԹԸ



Տնօրհներք փափաքող
հաւատացեալները
կրնան հեռաձայնել Տ. Եղիա Ա. Քհնյ.
Քերվանճեանին՝

(514) 241-9347 կամ

Եկեղեցւոյ գրասենեակ՝

(514) 279-3066

The Tradition of Home Blessing

The home is blessed for dedication or rededication, a reminder that the home reflects the Kingdom of God. Traditional times of the year for Armenian homes to be blessed are Eastertide (the 50 days following Easter), Christmastide (until February 14, the Feast of the Presentation), and after having moved into a new home.


At a Home Blessing, every member of the family assembles with the priest to sanctify together three life-giving gifts: bread, water, and salt. It is a custom for the priest to bring with him a *nushkhar* as a symbol of the presence of God's blessing.

To request a Home Blessing, please contact with Fr. Yeghia

at (514) 241- 9347 or church office at (514) 279-3066.



Աստուածաշունչի Սերտոդուրթիւն Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ մէջ



Եկե՛ք միացէք մեզի
ամեն Զինգշաբթի երեկոյեան ժամը
7:00-ին, մասնակից ըլլալու մեր
հետաքրքրական Աստուածաշունչի
Նիւթերուն եւ ընկերային
միջավայրին:



Աստուածաշունչի սերտոդուրթեան
խումբը՝ ընկերային ջերմ
մթնոլորտի մէջ հաճելի ժամանակ
կ'անցնէ, Տ. Եղիա Ա. Զինյ.
Քերվանճեանի՝ բժախնդրօրէն
պատրաստած
Աստուածաշնչական նիւթերու
հետաքրքրական ճիւղ
գիտելիքներով:





**Ուշադրութիւն մեր սիրելի հաւատացեալներուն,
Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն,
հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ
քարտուղարութեան (514) 279-3066, մեր
հաղորդակցութիւնները կարենալ պահելու համար
կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:
Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:**

Հովիւ եւ Ծխական Խորհուրդ



**Attention to our beloved parishioners,
If you have changes in your address, e-mail or phone numbers
please feel free to convey your new data to the Church office at
(514) 279-3066, to maintain our communication in a regular,
continuous, and up-to-date course.**

Thank you for your cooperation.

Pastor and Parish Council

ՆՈՒՐԱՏՈՒՌՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

***Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal
Donations of January 2018
have been received with great appreciation***



CHURCH:

Manoir Gouin Seniors \$81, Mr. Manvel Markosyan 40.

TZNOUNT GODFATHER:

Mr. Nuran Turnayan \$1300.

CHURCH 47th ANNIVERSARY:

Mr. & Mrs. Raffi Frengul \$100

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE ANOUSH BOGHOSSIAN

Mr. & Mrs. Melkon & Nayiri Boghossian,

Mrs. Isgouhi Baghdjian \$200,

Mrs. Diana Hadjetian, Mr. Viken Boghossian \$100,

Mr. Hapet Tutunjian \$50, Mr. & Mrs. Viken Manikian,

Mr. Varoujan Kerdian & Mrs. Seta Takvorian \$40,

Mr. & Mrs. Gary & Tania Guiragossian \$30,

Mr. & Mrs. Vahan Sekeryan, Mrs. Verjin Asaduryan \$25,

Mrs. Mayranus Ozoglu, Mrs. Ani Khatchikian,

Mr. & Mrs. Markar & Haigo Diradourian \$20

HOKEHANKISD:
THE LATE SIRARPI KELARTINIAN
Mr. & Mrs. Artin Sevadjabashian \$50

THE LATE KRIKOR SOZKES
Mrs. Arsaluys Gerger \$50


THE LATE NADYA DEMIRDOGEN
Mr. & Mrs. Murat & Anahit Demirdogen \$50

YOUGHAKIN TZNOUNT:
Mrs. Takouhi Avrikian \$100



ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 21 Յունուար 2018



Պոլսահայ Մշակութային Միության Վարչության եւ Յարակից
Մարմիններուն,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
Թուրքիոյ մէջ
ահաբեկչութեան պատճառով զոհուած
«Ակօս» շաբաթաթերթի հիմնադիր խմբագրապետ
Եւ Հայ Դատի պաշտպան՝

ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ (HRANT DINK)

մահուան 11-րդ տարելիցին առիթով
(Հոգեճաշի սպասարկութիւն Պոլսահայ Մշակութային Միության մէջ)



Տ. Եւ Տիկ. Տէյվ Եւ Արտեմիս Ֆիշըրի,
Տ. Եւ Տիկ. Սարգիս Եւ Անուշ Մարաշլեանի,
զաւակներուն եւ թոռներուն,
Տ. Եւ Տիկ. Չարեհ Եւ Ռուլա Մարաշլեանի,
Տ. Եւ Տիկ. Լեւոն Եւ Միրան Աղազարեանի,
Տ. Եւ Տիկ. Աւօ Եւ Արո Ուսթայեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
Իրենց սիրեցեալ մօր, մեծ մօր, մեծ մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝

ԱՐԱՔՍԻ

ՊՈՅԱՃԵԱՆ - ՄԱՐԱՇԼԵԱՆԻ

(ARAKSI BOYADJIAN - MARASHLIAN)

Մահուան առաջին տարելիցին առիթով



Տիկ. Խանըմ Պաղտասարեան-Սօզքէսի,
Տ. եւ Տիկ. Գեորգ եւ Մանուշակ Միրզայեանի եւ զաւակին,
Տ. եւ Տիկ. Սուրատ եւ Նաթալի Պաղտասարեանի եւ զաւակներուն,
Տ. եւ Տիկ. Մարտիրոս եւ Անասթագիա Պաղտասարեանի
եւ զաւակներուն,
Տիկ. Արշալոյս Կերկերի,
Տ. եւ Տիկ. Զամլէթ եւ Թալին Ճերեճեանի եւ զաւակներուն,
Տ. եւ Տիկ. Էմին եւ Դալար Մանուկեանի եւ զաւակներուն,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր, եղբօր եւ մեծ հօր՝

ԳՐԻԳՈՐ

ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ - ՍԵՕՉՔԷՍԻ

(KRIKOR BAGHDASARIAN-SOZKES)

մահուան 40-ին առիթով

(սուրճի սպասարկութիւն «Մարի Մանուկեան» սրահին մէջ)



Տիար Գարլօ Կիւրիւնլեանի եւ Տօքթ. Վիլմա Տերպէքեանի
եւ զաւակներուն,
Տ. եւ Տիկ. Ռուբէն եւ Մելինէ Արսէվերի
եւ զաւակներուն,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ծնողաց եւ մեծ ծնողաց՝

ԳԱՐԵԳԻՆ ԵՒ ՌՕՉԱ

ՏԵՐՊԵՔԵԱՆՆԵՐՈՒ

(KAREKIN & ROSA DERBEKYAN)

Ինչպէս նաեւ՝

ԹԱԹԼԵԱՆ ԵՒ ՏԵՐՊԵՔԵԱՆ

(TATLIAN & DERBEKYAN)

Գերդաստաններու համայն ննջեցելոց
հոգիներուն ի հանգիստ



Տ. եւ Տիկ. Ռուբեն եւ Մելինե Արսեվերի,
Տ. եւ Տիկ. Պետրոս-Արի եւ Թինա Արսեվերի եւ զաւակներուն,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ծնողաց եւ մեծ ծնողաց՝

**ԳԱՌՆԻԿ ԵՒ ՏԻԳՐԱՆՈՒՅԻ
ՏԵՐՊԵՔԵԱՆՆԵՐՈՒ**

(KARNIG & DIKRANUHI DERBEKYAN)

Ինչպէս նաեւ՝

**ՏԵՐ ՊՕՂՈՍԵԱՆ ԵՒ ՏԵՐՊԵՔԱՆ
(DER BOGHOSSIAN & DERBEKYAN)**

Գերդաստաններու համայն ննջեցելոց
հոգիներուն ի հանգիստ



Այրի Տիկ. Վերժին Քիւրքճիօղլուի,
Տ. եւ Տիկ. Գարին եւ Ռոպեր Քիլավուզի եւ զաւակներուն՝
Պիանքայի եւ Սթիվընի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝

**ԱՐԱ ՔԻԻՐՔՃԻՕՂԼՈՒԻ
(ARA KURKCUOGLU)**

Մահուան 10-րդ տարելիցին առիթով
Ինչպէս նաեւ՝

իրենց սիրեցեալ ծնողաց եւ մեծ ծնողաց՝

**ՍԻՐՎԱՐԴ ԵՒ ԳԵՈՐԳ
ԵՍԱՅԵԱՆՆԵՐՈՒ**

(SIRVART & KEVORK YESSAIAN)

Յոգիներուն ի հանգիստ



Տ. ԵԼ ՏԻԿ. ՎԱԳՔԷՆ ԵԼ ՆԱՂԵՆԻ ԱԳՂՈՅԵԱՆԻ,
Տ. ԵԼ ՏԻԿ. ՅԱՐՈՒԹ ԵԼ ԺԱԳԼԻՆ ԹՕՓԻՔԵԱՆԻ,
Տ. ԵԼ ՏԻԿ. ՅՈՎԱՆ ԵԼ ՍՈՆԻԱ ԱԳՂՈՅԵԱՆԻ,
ՏԻԱՐ ՄԱՐԳ ԱԳՂՈՅԵԱՆԻ,
Տ. ԵԼ ՏԻԿ. ՄԱՐԳ ԵԼ ԹԱՄԻԱ ՏԵՐՎԻԶԵԱՆԻ ԵԼ ՂԱԼԿԻՆ,
Տ. ԵԼ ՏԻԿ. ԱՐԱ ԵԼ ԳԱՐԻՆ ՖՐՈՆՃԵԱՆԻ,
ԽՆՂՐԱՆՔՈՎ ԽՈԳԵԽԱՆՁԱՍՏԵԱՆ ԱՅԱԶՍՈՆ ԱԽՈՒԻ ԿԱՏԱՐՈՒԼԻ
ԻՐԵՆՑ ՍԻՐԵԳԵԱԼ ԽՈՐ, ՄԵԾ ԽՈՐ ԵԼ ՄԵԾ ՄԵԾ ԽՈՐ`

ՄԻՔԵԱՅԵԼ ԹՕՓԻՔԵԱՆԻ

(MIKAEL TOPIKIAN)

Մահուան 40-ին առիթով



Տ. ԵԼ ՏԻԿ. ԱՐԹՅՈ ԵԼ ԱՆԻ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԵԼ ԴՈՒՍՏՐԻՆ` ԼՈՂԻԻ,
Տ. ԵԼ ՏԻԿ. ԱՐԷՆ ԵԼ ՄԱՏՈՒԷՆ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ,
ԽՆՂՐԱՆՔՈՎ ԽՈԳԵԽԱՆՁԱՍՏԵԱՆ ԱՅԱԶՍՈՆ ԱԽՈՒԻ ԿԱՏԱՐՈՒԼԻ
ԻՐԵՆՑ ՍԻՐԵԳԵԱԼ ՂԱԼԿԻՆ ԵԼ ԵՂՔՐՈՐ`

Վաղամերիկ`

ՍԱՐՕ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

(SARO ARMEN MANOUKIAN)

Մահուան 14-րդ տարելիցին առիթով



ՏԻԿ. ՍԻԼՎԱ ՊԵՔՅԱՐԵԱՆԻ,
ԽՆՂՐԱՆՔՈՎ ԽՈԳԵԽԱՆՁԱՍՏԵԱՆ ԱՅԱԶՍՈՆ ԱԽՈՒԻ ԿԱՏԱՐՈՒԼԻ
ԻՐ ՍԻՐԵԳԵԱԼ ԽՈՐ`

ՍԱՐԳԻՍ ՊԵՔՅԱՐԵԱՆԻ

(SARKIS BEKYARIAN)

Յոգևոյն ի հանգիստ

Ինչպես նաև՝
Իր սիրեցեալ մեծ ծնողաց՝
ԽԱՉԱՏՈՒՐ ԵՒ ՄԱՐԻԱՄ
ՊԵՔՅԱՐԵԱՆՆԵՐՈՒ
(KHATCHADOUR & MARIAM
BEKYARIAN)
Հոգիներուն ի հանգիստ



"I also tell you this: If two of you agree down here on earth concerning anything you ask, my Father in heaven will do it for you."

Matthew 18:19 (NLT)



ՑԱԻԱԿՑԱԳԻՐ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ
Հոգեւոր Հովիւն ու Ճիսկան Խորհուրդը
Ողբացեալ

ԱՆՈՒՇ ԴՕՂՈՍԵԱՆԻ (ANOUSH BOGHOSSIAN)

Մահուան տխուր առիթով
իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի
բոլոր պարագաներուն, աղօթելով առ Աստուած,
որ անոր հոգին Երկնային Արքայութեան արժանանայ:



ՑԱԻԱԿՑԱԳԻՐ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ
Հոգեւոր Հովիւն ու Ճիսկան Խորհուրդը
Ողբացեալ

ԵՂԻԱ ԵՂԻԱԵԱՆԻ (YEGHIA YEGHIAYAN)

Մահուան տխուր առիթով
իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի
բոլոր պարագաներուն, աղօթելով առ Աստուած,
որ անոր հոգին Երկնային Արքայութեան արժանանայ:





Ա. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդարանիստ Եկեղեցւոյ 2018 Տարեշրջանի Տօնացոյց


Ամիս	Օր	Ձեռնարկ
Յունուար	28, Կիրակի	Ս. Սարգիս «Նոր Նշանեալ եւ Նորապսակ Զոյգերու Օրհնութեան Օր»
Փետրուար	8, Հինգշաբթի	«Վարդանանց» Սկառուտներու Օրհնութիւն
	10, Շաբաթ	Բուն Բարեկենդան Ճաշկերոյթ
	14, Զորեթշաբթի Երեկոյեան ժամը 7 :00- ին	Հսկում Տեառընդառաջ
	21, Զորեթշաբթի Երեկոյեան ժամը 7 :00- ին	Հսկում

	28, Չորեքշաբթի Երեկոյեան ժամը 7 :00- ին	Հսկում
Մարտ	4, Կիրակի	Տարեկան Անդամական Ընդհանուր Ժողով
	7, Չորեքշաբթի Երեկոյեան ժամը 7 :00- ին	Հսկում Միջինք
	10, Շաբաթ Առաւօտեան ժամը 11:00- ին	Արեւազալի Ժամերգութիւն եւ Միջինքի հիւրասիրութիւն
	14, Չորեքշաբթի Երեկոյեան ժամը 7 :00- ին	Հսկում
	17, Շաբաթ	Ս. Գրիգոր Լուսւորիչի Կիրապ Մտնելու Յիշատակութեան Օր
	21, Չորեքշաբթի Երեկոյեան ժամը 7 :00- ին	Հսկում

	25, Կիրակի	Ճաղկազարդ
	29, Հինգշաբթի	Հինգշաբթի Ոտնլուայ Երեկոյեան ժամը 7:00-ին Պահոց Ընթրիք «Մարի Մանուկեան» սրահ Խաւարման Գիշեր
	30, Աւագ Ուրբաթ	Կարգ Թաղման Երեկոյեան ժամը 7- ին
	31, Շաբաթ	«Ճրագալոյց» Ս. Չատկուայ
Ապրիլ	1, Կիրակի	Ս. Չատիկ (Ճաշկերոյթ) «Մարի Մանուկեան» սրահ
	2, Երկուշաբթի	Մեռելոց Հոգեհանգիստ
	24, Երեքշաբթի	Մեծ Եղեռնի Յիշատակի Օր
Մայիս	10, Հինգշաբթի	Համբարձման Տօն «Մարի Մանուկեան» Ճաշկերոյթ եւ վիճակ
	13, Կիրակի	Մայրերու Օր
	25, 26, 27	35-րդ Պատգամաւորական Ժողով

	Ուրբ., Շբթ., Կիր.	Ս. Վարդան Եկեղեցւոյ մէջ Վանքուկըր
Յունիս	3, Կիրակի	Տօն Կաթողիկէ Ս. Էջմիածնի Ս. Գրիգոր Լուսաւորչի Ելն ի Վիրապէն Եկեղեցւոյ Անուանակոչութիւն Մատաղօրհներ
Յուլիս	8, Կիրակի	«Պայծառակերպութիւն» Խաչալուայ Զրօրհներ Վարդավառ
	9, Երկուշաբթի	Մեռելոց Յոգեհանգիստ
Օգոստոս	12, Կիրակի	Տօն «Վերափոխում» Ս. Աստուածածնի Խ աղոթօրհներ – (ճաշկերոյթ) Ս. Մանուկեան
Սեպտեմբեր	9, Կիրակի	Ս. Խաչվերաց Մատաղ Վաչէ Յովսէփեան սրահ
	21, Ուրբաթ	Հայաստանի Հանրապետութեան 25-րդ Տարեդարձ
Հոկտեմբեր	27, 28 Շաբաթ, Կիրակի	Տարեկան Պազար «Մարի Մանուկեան» սրահ

Նույնաբեր	Թուականը յաջորդի	«Ամիտաս» Դպրաց Դասի 60- րդ Տարեդարձ
Դեկտեմբեր	2, Կիրակի	Մանուկներու Ս. Ծնունդ եւ Կաղանդի Խրախճանք CFFA «Մարի Մանուկեան» սրահ
	31, Երկուշաբթի	ՆՈՐ ՏԱՐԻ





Եկեղեցւոյ Ձեռնարկներ

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ մէջ
Աստուածաշունչի Սերտողութիւն – Հինգշաբթի օրերուն Տ. Եղիա Ա.
Քինյ. Քերվանճեանի ուղղեկցութեամբ
Կիրակնօրեայ Վարժարան – Կիրակի առաւօտեան ժամը 11-էն
սկսեալ Ուսուցչուհի Շողիկ Գուշաքճեանի հետ

CHURCH UPCOMING EVENTS

Bible Study – Every Thursday at 7:00 pm led by Arch. Fr. Yeghia
Kervanjyan
Sunday School – Every Sunday at 11:00 am with Miss Shoghig
Koushakjian



Funded by the
Government
of Canada

Financé par le
gouvernement
du Canada

Canada

YOUTH INTERFAITH PROJECT “CELEBRATING OUR DIVERSITY NOW”

Beloved faithful,

To mark the “2018 Year of Youth” proclaimed as such by His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, the Armenian Diocese of Canada elaborated a youth interfaith project called “Celebrating Our Diversity Now”.

The Federal Government of Canada informed the Diocese about its decision to support the Project.

Within the framework of the Project:

- Four meetings-discussions will be organized in Montreal (22-26 January, 2018), Toronto (5-9 February, 2018), Calgary (19-23 February, 2018), and Vancouver (5-9 March, 2018);
- A website dedicated to the Project, and to the youth interfaith dialogue in Canada will be created;
- Newsletters will be disseminated among members of the participating religious communities, and
- A documentary movie about the same topics will be created.

God willing, the project would bring together young leaders and clergy from Christian, Jewish, Muslim, Buddhist, Sikh, and Hindu Communities. At each meeting, each faith community will be represented by three young leaders of 18-35 years of age, and one clergy, appointed by the religious communities themselves.

It is anticipated that the Project would provide the first-hand information about the Canadian religious diversity, each other's religions, and the ecumenical and interfaith dialogue in Canada; an interregional interfaith network of young leaders will be established and a new bilingual on-line platform for the youth interfaith dialogue would be created.

I hereby invite the youth to apply for participation in the Project. Please send us your Letter of Interest by January the 15th.

We will select 3 young leaders of 18-35 years of age to participate in the meeting in Montreal on 22-26 January, 2018. The participants will have to make a short presentation on January the 22nd, that will cover one aspect of the life of the Armenian Apostolic Church in Canada.

There is no fee for participation in the meetings, and the Armenian Diocese will provide meals for the participants of the meetings.

Prayerfully,

Rev. Archpriest Yeghia Kervanjyan

Parish Priest of St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal



Lancement du Groupe Jeunesse

Musicale St-Grégoire d'Outremont



Nous vous invitons à vous joindre à notre nouvelle Chorale d'Enfants « Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont » (âge d'inscription 7 à 15 ans).



Les pratiques débuteront dimanche le 14 janvier 2018, à l'Église St-Grégoire l'Illuminateur, situé au 615 Av. Stuart à Outremont et auront lieu de 13h00 à 14h00. Elles se poursuivront par la suite tous les dimanches selon ce même horaire.

Les cours seront donnés par le professeur Karen Manucharyan diplômé du Conservatoire de Yerevan, en Arménie, qui assumera la direction de cette chorale.

**Les enfants auront l'opportunité d'apprendre les bases de la notation musicale et le solfège
Le répertoire étudié consistera de pièces musicales contemporaines, classiques et religieuses, de langue française et arménienne.**

La participation est gratuite. Venez nombreux participer à cette expérience enrichissante!

**Pour des informations additionnelles,
svp vous adresser au
(514) 279-3066 ou à stgregorychurch@gmail.com**

Conseil paroissial



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մանկական

Երաժշտական Խումբ



Ձեզ կը հրաւիրենք միանալու մեր նոր մանկական երգչախումբին «Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont» - (գրանցման տարիք 7-15 տարեկան):

Փորձերը կը սկսին Կիրակի, 14 Յունուար 2018, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, կ.ե. ժամը 1:00 - 2:00 - հասցէ 615 Stuart Avenue Outremont-ի մէջ: Փորձերը պիտի շարունակուին կատարուիլ ամէն Կիրակի, վերոյիշեալ նոյն ժամուն:



Դասընթացքները պիտի կատարէ Երեւանի երաժշտանոցէն շրջանաւարտ, Կարէն Մանուչարեան, որ կը ստանձնէ նաեւ՝ երգչախումբին ղեկավարութիւնը:

Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու հիմնական երաժշտութեան նոթաները, եւ միաժամանակ մշակելով անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:

Ուսումնասիրուած ծրագիրը պիտի բաղկանայ ժամանակակից, դասական եւ կրօնական երաժշտական կտորներէ, Ֆրանսերէն եւ Չայերէն լեզուներով:

Մասնակցութիւնը անվճար է: Եկէ՛ք եւ օգտուեցէք այս պատեհ առիթէն:

Յաւելեալ տեղեկութիւններու համար հաճեցէք հեռաձայնել (514)279-3066 կամ stgregorychurch@gmail.com

Ծիական Խորհուրդ



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի

St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6-12 տարեկան երեխաներու համար

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ

Կիրակի, 10 Սեպտեմբեր 2017

SUNDAY SCHOOL

On Sunday, September 10, 2017

For the ages of 6-12 years old children

Երեխաները հաճելի եւ ընկերային մթնոլորտի մէջ կը սորվին Սաղմոսներ եւ երգեր, կը զարգացնեն Հայերէն լեզուն եւ կը ծանօթանան Հայոց Պատմութեան:

Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար հեռաձայնել՝

Եկեղեցւոյ գրասենեակ (514) 279-3066

Տէր Եղիա Ա Քհնյ. Զերվանճեանին (514) 241-9347



In a pleasant and friendly atmosphere, the children will learn Psalms & songs, develop Armenian language skills, & introduce to Armenian history.

Fun & fascinating consecutive Fieldtrips

For more information and registration call to the Church office (514) 279-3066

Archpriest Fr. Yeghia Kervanjian (514)241-9347

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008
Rev. Arch. Fr. Yeghia Kervanjian: (514)241-9347
E-Mail: secretary@saintgregory.ca, www.saintgregory.ca
Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ԴՊՐԱՑ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսալորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ

Հոգեւոր Հովիւն ու Դպրաց Դասի Վարչութիւնը

**Կը յայտնեն թէ իսկ սկսած են դպրաց
պատրաստութեան
Հանդիպումները**

**Այն պատանիներն ու երիտասարդները,
որոնք կը փափաքին ծառայել
Հայց. Առաք. Եկեղեցւոյ Սուրբ Խորանին եւ մաս կազմել
Ս. Գրիգոր Լուսալորիչ Եկեղեցւոյ Դպրաց Դասին կը
խնդրենք**

**հեռաձայնել՝ Եկեղեցւոյ Հովիւին (514) 241 -9347
Կամ Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514)279-3066:**

**Հոգեւոր Հովիւ
Տէր Եղիա Ա Քինյ. Քերվանճեան**

ՄԱՅՐ ՏԱԾԱՐ



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի



ԽՈԿՈՒՄ ԵՒ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Սիրելի հաւատացեալներ, ԽՈԿՄԱՆ, ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆԸ արդէն իսկ տեղի
կ'ունենան ամէն Հինգշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին,
Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Եկեղեցւոյ մէջ:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալները մասնակցելու այս
հոգեպարար արարողութեան եւ սերտողութեան, որուն
ընթացքին միասնաբար պիտի փորձենք ճանչնալ Սուրբ
Գիրքը, Եկեղեցւոյ հաւատքն ու առաքելութիւնը, մեր դերն
ու մասնակցութիւնը Եկեղեցւոյ կեանքին մէջ եւ
վերջապէս պատասխան գտնել մեզ յուզող
հարցումներուն ու մտահոգութիւններուն:

Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին ներկայութիւնը:

Աղօթարար՝

S. Եղիա Ա Քհնյ. Բերվանճեան


615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066
Rev. Arch. Fr. Yeghia Kervanjan: (514) 241-9347

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՐԻ

Միքելի Հասարացեալներ, Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզ, որ յետայսու, ամէն Կիրակի, Ձեր ինքնաշարժները կրնաք կանգնեցնել Bernard փողոցին վրայ գտնուող Ecole Outremont-ի parking-ին մէջ, սկսեալ առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ կ.ե. ժամը 3:00:

CAR'S PARKING

Dear Parishioners, We would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the Ecole Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm.



- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. Go all the way to the "centre d'éducation". The parking space is on your right.